# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով դեկտեմբեր ամսին

**«Ս. Ներսէս Շնորհալի»** շքանշանով պարգեւատրուել են.
Գրիգոր սարկաւագ Այթունեան (ԱՄՆ Արեւմտեան թեմ)
Սերխիո Նահապետեան (Արգենտինայի թեմ)
Ժանեթ Պասմաճեան (Եգիպտոսի թեմ)
Մկրտիչ Հանենեան (Եգիպտոսի թեմ)

**Օրհնութեան գիր** է տրուել.
Նազարեթ սարկաւագ Գարթալեան (Եգիպտոսի թեմ)
Ստեփան Իսրայէլեան (Եգիպտոսի թեմ)
Դանիէլ Ազնաւուրեան (Եգիպտոսի թեմ)
Լեւոն Գաղթացեան (Եգիպտոսի թեմ)
Սահակ-Մեսրոպ վարժարան (Արգենտինայի թեմ)
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի (ԱՄՆ Արեւմտեան թեմ)

## ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՒ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿՐՈՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ 9-ՐԴ ՆԻՍՏԸ

(2-3 դեկտեմբերի 2009 թ., Աստանա, Ղազախստան)

Ս/թ դեկտեմբերի 2-3 Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում տեղի ունեցավ Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների համագումարի քարտուղարության 9-րդ նիստը: Քարտուղարության այս նիստը կոչված էր քննարկելու ս/թ հուլիս ամսին տեղի ունեցած Համաշխարհային եւ ավանդական կրոնների երրորդ համագումարի արդյունքները, ինչպես նաեւ 2012 թվականին կայանալիք Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների չորրորդ համագումարի նախապատրաստական աշխատանքները: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այս նիստին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացրեց Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների համագումարի քարտուղարության անդամ, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Գեղարքունիքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանը:

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՆԳ ԳՄԲԵԹՆԵՐԻ ԵՒ ԽԱՉԵՐԻ ՕԾՈՒՄԸ

**(8 դեկտեմբերի 2009 թ.)**

Դեկտեմբերի 8-ին մեծ շուքով տեղի ունեցավ Աբովյանի Ս. Հովհաննես նորակառույց եկեղեցու հինգ գմբեթների, խաչերի օծման արարողակարգը՝ ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել եպս. Քարամյանի եւ մասնակցությամբ թեմի հոգեւոր դասի:

Գերաշնորհ Սրբազան Հայրն իր օրհնությունը բերեց Արովյան քաղաքի բնակիչներին, ներկաներին, ինչպես նաեւ իր գոհունակությունը հայտնեց նորակառույց եկեղեցու բարերարին՝ ԱԺ պատգամավոր փիար Գագիկ Ծառուկյանին:

Սրբազան Հայրն իր օրհնության խոսքում նշեց, որ եթե այս անձեռագործ տաճարը չլցնենք մեր աղոթքներով, ապա այն կմնա քարեղեն կառույց: Եվ յուրաքանչյուր հայորդի իր քրտինքը պետք է շաղախի եկեղեցաշինության ու հայրենանվեր աշխատանքին, որպեսզի պայծառանա Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին եւ Հայրենիքը:

Օծմանը ներկա էին Արովյանի քաղաքապետ պարոն Գուլոյանը, քաղաքային եւ մարզային իշխանությունների ներկայացուցիչներ:

ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

## ՎԵՐԱՕԾՎԵՑ ՋԱՎԱԽՔԻ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՇՐՋԱՆԻ ԴԻԼԻՍԿԱ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Դեկտեմբերի 9-ին՝ Սուրբ Աստվածամոր Աննայից հղացման տոնի օրը, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի եւ մասնակցությամբ Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բաբգեն աբեղա Սալբիյանի, վերաօծվեց Ախալքալաքի շրջանի Դիլիսկա գյուղի Ս. Սարգիս եկեղեցին:

Դիլիսկան Ջավախքի բազմամարդ գյուղերից մեկն է: Գյուղում պահպանված հնագիտական հուշարձանները վկայում են, որ Դիլիսկան բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից, եւ Դիլիսկան Ջավախքի այն սակավաթիվ գյուղերից է, որը 1830 թվականին Կարնո հայտնի գաղթի ժամանակ ուներ տեղաբնիկ հայ բնակչություն: Վերաբնակիչ հայերը տեղափոխվել են Կարնո գավառի Կրճնկոց Գեղախոռ եւ Դվնիկ գյուղերից: 1837 թվականին գյուղում հիմնվել է խալիֆայական կարգի առաջին դպրոցը, ավելի ուշ նաեւ եկեղեցական-ծխական դպրոց: 1830-ականներին գյուղում հիմնվել է նաեւ Սուրբ Սարգիս եկեղեցին: Եկեղեցու պատերին ներքուստ ագուցված են ԺԵ-ԺԶ դարերի արձանագիր խաչքարեր:

Սրբազան արարողության օրը բազմամարդ էր Դիլիսկա գյուղը: Գյուղի մուտքին հոգեւոր հայրերին եւ հյուրերին համայնքի ղեկավարությունը եւ ազգաբնակչությունը դիմավորեց աղ ու հացով եւ դհոլ-զուռնայի ժողովրդական երաժշտությամբ: Եկել էին հյուրեր ինչպես Վրաստանի տարբեր շրջաններից, այնպես էլ Հայաստանից: Ներկա էին Վրաստանում ՀՀ լիազոր դեսպան պարոն Հրաչ Սիլվանյանը, Ախալքալաքի շրջանից Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հարություն Հովհաննիսյանը եւ ուրիշներ: Վերաօծման հանդիսությանը մասնակցում էին նաեւ Ախալքալաքի շրջանային ժողովի, վարչության եւ ոստիկանության ղեկավարությունը:

Սուրբ Սարգիս եկեղեցին վերականգնվել եւ տարածքը բարեկարգվել է բարերարությամբ ծնունդով Դիլիսկայից, այժմ Ռուսաստանի Դաշնությունում ապրող Սամվել Նահապետյանի:

Եկեղեցու վերաօծման ընթացքում կատարվեց տաճարի օրհնություն, ապա վերաօծվեցին տասնվեց սյուները, մկրտության ավազանը, սրբապատկերները եւ խաչքարերը: Այնուհետեւ մատուցվեց անդրանիկ Պատարագ: Հավարտ արարողության եկեղեցու բակում կատարվեց ավանդական մատաղօրհնեք եւ ժողովրդական տոնախմբություն:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԺՆԵՒՈՒՄ

Դեկտեմբերի 15-19 Ժնեւի Էկումենիկ կենտրոնում տեղի ունեցավ Եւրոպական Եկեղեցիների կոնֆերանսի կենտրոնական կոմիտեի անդրանիկ հանդիպումը, որի ընթացքում ընտրվեցին Եւրոպական Եկեղեցիների կոնֆերանսի նոր նախագահը՝ Ֆրանսիայի Հույն Ուղղափառ Եկեղեցու Էմանուել միտրոպոլիտը (Տիեզերական պատրիարքություն), կառույցի նախագահության նոր անդամները, «Եկեղեցիները երկխոսության մեջ», «Եկեղեցի եւ հասարակություն» եւ միգրացիայի հարցերով հանձնախմբերի նոր անդամները:

Առաջիկա երեք տարիներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբում ներկայացնելու են Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մկրտիչ վարդապետ Պռոշյանը, «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբում՝ Մայր Աթոռի Եկեղեցի եւ պետություն հարաբերությունների բաժնի պատասխանատու, փոխդիվանապետ Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը, միգրացիայի հարցերով հանձնախմբում՝ Մայր Աթոռի ներեկեղեցական բաժնի պատասխանատու Տ. Պարույր քահանա Ավետիսյանը:

Կենտրոնական կոմիտեն քննարկեց եւ հաստատեց կոնֆերանսի 2010-2013 թթ. ծրագրային ուղղությունները, անդրադարձ կատարեց կառույցի ֆինանսական վիճակին:

Հանդիպման ընթացքում Կենտրոնական կոմիտեն առանձին հայտարարություններով հանդես եկավ կոպենհագենյան գագաթնաժողովի եւ Իտալիայում գաղթականների վիճակի վերաբերյալ:

Մասնակիցները անդրադարձան Թուրքիայում կրոնական փոքրամասնությունների վիճակին եւ ծանոթացան դրանց ուղղությամբ կոնֆերանսի եւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի համատեղ մոնիթորինգի հանձնախմբի աշխատանքներին: Անդրադարձ կատարվեց Վրաստանի Հանրապետությունում ազգային եւ կրոնական փոքրամասնությունների խնդիրներին, դրանց առնչությամբ հանձնարարականներ տրվեցին ԵԵԿ գլխավոր քարտուղարին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի կենտրոնական կոմիտեում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում է Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը:

## ՂՐԻՄԻ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ՄՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Ղրիմի Ինքնավար Հանրապետության գերագույն ռադայի նախագահ Անատոլի Գրիցենկոն, ի պատասխան Ղրիմի Ս. Խաչ եկեղեցու առնչությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հղած գրության, հեռախոսազրույց է ունեցել Նորին Սրբության հետ: Գերագույն ռադայի նախագահը հավաստիացրել է Վեհափառ Հայրապետին, որ Ղրիմի Ս. Խաչ եկեղեցու կարգավիճակում որեւէ փոփոխություն չի լինելու: Ս. Խաչ եկեղեցին շարունակելու է գտնվել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Ուկրաինայի հայոց թեմի իշխանության ներքո՝ որպես հոգեւոր-եկեղեցական նշանակության կառույց:

Վեհափառ Հայրապետի փնօրհինությամբ Ուկրաինայի հայոց թեմում արդեն իսկ հոգեւոր սպասավորության է կոչվել Տ. Հայրիկ աբեղա Հովհաննիսյանը, ով թեմակալ առաջնորդի իշխանության ներքո իր ծառայությունն է բերելու իբրեւ Ղրիմի առաջնորդական փոխանորդ եւ Ս. Խաչ վանքի վանահայր:

## ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փնօրհինությամբ մի շարք եկեղեցականներ իրենց հոգեւոր ծառայությունը կշարունակեն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու տարբեր թեմերում:

Տ. Աբգար վարդապետ Հովակիմյանը, ազատվելով Սյունյաց թեմի Սյունիքի փոխառաջնորդի պարտականություններից, ծառայության է կոչվել Կանադայի հայոց թեմում:

Տ. Զավեն աբեղա Յազիչյանը նշանակվել է Սյունիքի փոխառաջնորդ, Տ. Խորեն աբեղա Առաքելյանը ծառայության է կոչվել Հունաստանի հայոց թեմում:

Գեղարդավանքում սպասավորող Տ. Դանիել վարդապետ Թումանյանը ծառայության է կոչվել Շվեդիայի հոգեւոր հովվությունում:

Տ. Ավետիս քահանա Համբարձումյանը (Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարան) փոխադրվել է Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմ՝ որպես Սիդնեյի Սուրբ Հարություն եկեղեցու հոգեւոր հովիվ, Տ. Հակոբ քահանա Հակոբյանը (Սյունյաց թեմի Սյունիքի փոխառաջնորդություն) հոգեւոր սպասավորությունը կշարունակի Եգիպտոսի հայոց թեմում:

## ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեծ հանդիսաւորութեամբ նշւեց Ս. Ստեփաննոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի տօնը: Տօնական արարողութիւնը կրկնապատկուեց նաեւ սարկաւագական ձեռնադրութեամբ: Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ս. Պատարագի ընթացքում Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալեանը կատարեց Գէորգեան Հոգեւոր ճեմարանի 18 սաների սարկաւագական ձեռնադրութիւնը:

Ս. Պատարագի ընթացքում ձեռնադրող Սրբազան Հայրը հաւուր պատշաճի քարոզ խօսեց՝ տօնի առթիւ շնորհաւորելով սարկաւագաց դասին եւ անդրադառնալով սարկաւագութեան աստիճանի կարեւորութեանն ու սարկաւագի պարտականութիւններին: Ապա դիմելով նորընծաներին՝ Սահակ Սրբազանն ասաց. «Սիրելի՛ նոր ձեռնադրուած սարկաւագներ, այսօր դուք մուտք գործեցիք Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անդաստանից ներս: Չգիտեմ, թէ դուք ի՞նչ էք մտածում այս պահին կամ ի՞նչ էք սպասում Եկեղեցուց եւ մեզանից: Եթէ սպասում էք փառք եւ նիւթական հարստութիւն, ապա սխալւում էք: Ձեզ այստեղ սպասւում է զոհողութիւն եւ սպասաւորութիւն: Ի մտի պիտի ունենաք, որ ինչքան հոգեւոր աստիճանները բարձրանում են, այնքան իւրաքանչիւրից պահանջւում է առաւել զոհողութիւն եւ առաւել պարտաւորութիւն»: Սրբազան Հայրը նորընծաներին հորդորեց նաեւ անմնացորդ սիրով եւ նուիրումով լծուել իրենց ծառայութեանը՝ ի զօրացումն եւ պայծառութիւն Հայ Եկեղեցու եւ ի մխիթարութիւն մեր ժողովրդի:

Տօնի առիթով Մայր Աթոռի բոլոր սարկաւագներին Հայրապետական իր օրհնութիւնն ու հայրական պատգամը բաշխեց նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:



Սարկավագական Ձեռնադրություն



Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութեան շարքերում սպասաւորող շուրջ 140 սարկաւագներ ծառայում են Մայր Աթոռի փարբեր կառոյցներում եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու աշխարհասփիւռ թեմերում:

## ԱՐԵԹ ՍԱՐԿԱՒԱԳ ԲԻՆԻՋԻ

Ծնուել է 1979 թ. յուլիսի 22-ին Իսփամբուլում:

1985-1986 թթ. սովորել է Իսփամբուլի հայկական դպրոցում:

1986-1997 թթ. ուսումը շարունակել է Գերմանիայի Էսսեն քաղաքի Բերենդելի անուան միջնակարգ դպրոցում:

1997-2001 թթ.՝ Էսսեն քաղաքի «Յոհան բապփիսփ դիսփեր» ընկերութիւնում սովորել է ոսկերչութիւն, արծաթագործութիւն եւ ժամագործութիւն:

2001-2003 թթ. աշխափել է նոյն ընկերութիւնում որպէս ոսկերիչ եւ արծաթագործ:

2004-2005 թթ. աշխափել է «Ռեւա» ընկերութիւնում որպէս ժամագործ:

2004-2009 թթ. սովորել է Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոցում:

2009 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգեան Հոգեւոր ճեմարանում:

## ԱՐԹՈՒՐ ՍԱՐԿԱՒԱԳ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Ծնուել է 1984 թ. յունիսի 9-ին Արարափի մարզի Աւշար գիւղում:

1990-2001 թթ. սովորել է Աւշարի միջնակարգ դպրոցում:

2001-2005 թթ. ուսանել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2005-2006 թթ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

2006-2008 թթ. ծառայել է Հայոց բանակում:

2009 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

## ԱՐՄԱՆ ՍԱՐԿԱՒԱԳ ՊԱԼԵԱՆ

Ծնուել է 1982 թ. նոյեմբերի 10-ին Իրաքի Բաղդադ քաղաքում:

1988-2001 թթ. սովորել է Մոսուլի միջնակարգ դպրոցում:

2001-2004 թթ. ուսանել է Մոսուլի համալսարանի համակարգչային ծրագրաւորման բաժնում:

2004-2005 թթ. սովորել է Երեւանի Պոլիփեխնիկական ինսփիփուփի արդիւնաբերական էլեկփրոնիկայի բաժնում:

2005-2009 թթ. ուսանել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2009 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

## ԼԵՒՈՆ ՍԱՐԿԱՒԱԳ ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Ծնուել է 1987 թ. յունուարի 4-ին Երեւան քաղաքում:

1993-2003 թթ. սովորել է Կոփայքի մարզի Հրազդան քաղաքի Անանիա Շիրակացու անուան թ. 6 միջնակարգ դպրոցում:

2004 թ. ընդունուել է Գիւմրիի Հոգեւոր ընծայարան:

2004-2009 թթ. սովորել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2009 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

## ԱՐՏԱԿ ՍԱՐԿԱՒԱԳ ՏԻՊԱՆ

Ծնուել է 1987 թ. յունուարի 6-ին Սիրիայի Հալեպ քաղաքում:

1993-2005 թթ. սովորել է ՀԲԸՄ-ի Լազար Նաջարեան-Գալուստ Կիւլպենկեան կենտրոնական վարժարանի միջնակարգ դպրոցում:

2005-2009 թթ. ուսանել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2009 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

## ԼԵՒՈՆ ՍԱՐԿԱՒԱԳ ԵՐՆՋԱԿԵԱՆ

Ծնուել է 1987 թ. յունուարի 25-ին Երեւան քաղաքում:

1995-2005 թթ. սովորել է Երեւանի թ. 62 միջնակարգ դպրոցում:

2005 թ. ընդունուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարան:

## ՍԵՒԱԿ ՍԱՐԿԱՒԱԳ ՍԱՐԻԲԵԿԵԱՆ

Ծնուել է 1987 թ. ապրիլի 22-ին Էջմիածին քաղաքում:

1994-2004 թթ. սովորել է Էջմիածնի Մովսէս Խորենացու անուան թ. 10 դպրոցում:

2004 թ. ընդունուել է Գիւմրիի Հոգեւոր ընծայարան:

2004-2009 թթ. սովորել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2009 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ ՄԻՐՋՈՅԵԱՆ

Ծնուել է 1987 թ. հոկտեմբերի 20-ին Արմաւիրի մարզի Արեւաշապ գիւղում:

1994-1997 թթ. սովորել է Արեւաշապ գիւղի միջնակարգ դպրոցում:

1997-2004 թթ. ուսանել է Էջմիածնի Ներսիսեան վարժարանում:

2004-2009 թթ. սովորել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2009 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

## ԴԱՒԻԹ ՍԱՐԿԱՒԱԳ ԹՈՐՈՍԵԱՆ

Ծնուել է 1988 թ. յունիսի 4-ին Էջմիածին քաղաքում:

1995-2005 թթ. սովորել է Վահան Ռշտունու անուան թ. 11 դպրոցում:

2005-2009 թթ. ուսանել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2009 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

## ՄԻՔԱՅԷԼ ՍԱՐԿԱՒԱԳ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ծնուել է 1988 թ. յունիսի 27-ին Էջմիածին քաղաքում:

1995-2005 թթ. սովորել է Էջմիածնի Խաչատուր Աբովեանի անուան թ. 4 միջնակարգ դպրոցում:

2005-2009 թթ. ուսանել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2009 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

## ԳՈՌ ՍԱՐԿԱՒԱԳ ԹԱՐՎԵՐԴԵԱՆ

Ծնուել է 1988 թ. օգոստոսի 13-ին Երեւան քաղաքում:

1995-2005 թթ. սովորել է Երեւանի թ. 189 միջնակարգ դպրոցում:

2005 թ. ընդունուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարան:

## ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՐԿԱՒԱԳ ՅԱԿՈԲԵԱՆ

Ծնուել է 1988 թ. յունիսի 27-ին Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքում:

1995-2005 թթ. սովորել է գիւղի թ. 1 միջնակարգ դպրոցում:

2005 թ. ընդունուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարան:

## ԴԱՆԻԷԼ ՍԱՐԿԱՒԱԳ ԽԱՆԱՆԵԱՆ

Ծնուել է 1988 թ. օգոստոսի 29-ին Ադրբեջանի Բաքու քաղաքում:

1994-2005 թթ. սովորել է ՌԴ Կիսլովոդսկ քաղաքի թ. 4 միջնակարգ դպրոցում:

2005-2009 թթ. ուսանել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2009 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

## ՀԱՅԿ ՍԱՐԿԱՒԱԳ ՍՄԲԱՏԵԱՆ

Ծնուել է 1988 թ. օգոստոսի 15-ին Էջմիածին քաղաքում:

1995-2005 թթ. սովորել է Էջմիածնի Վահան Ռշտունու անուան թ. 11 դպրոցում:

2005-2009 թթ. ուսանել է Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոցում:

2009 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանում:

## ՎՈԼՈԴՅԱ ՍԱՐԿԱՒԱԳ ՆԱԶԱՐԵԱՆ

Ծնուել է 1988 թ. յունիսի 20-ին Գեղարքունիքի մարզի Ծովազարդ գիւղում:

1995-2005 թթ. սովորել է Ծովազարդ գիւղի միջնակարգ դպրոցում:

2005-2009 թթ. ուսանել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2009 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

## ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԱԲԵԱՆ

Ծնուել է 1988 թ. մայիսի 25-ին Արարատի մարզի Մասիս քաղաքում:

1995-2005 թթ. սովորել է Մասիս քաղաքի թ. 2 միջնակարգ դպրոցում:

2002-2003 թթ. ուսանել է Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանում:

2003-2005 թթ. սովորել է Մասիս քաղաքի թ. 5 միջնակարգ դպրոցում:

2005-2009 թթ. ուսանել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2009 թ. ուսումը շարունակում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

## ԳԱԳԻԿ ՍԱՐԿԱՒԱԳ ՅԱԿՈԲԵԱՆ

Ծնուել է 1988 թ. յունուարի 27-ին Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքում:

1995-2005 թթ. սովորել է Ջերմուկի թ. 1 միջնակարգ դպրոցում:

2005 թ. ընդունուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարան:

## ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿԱՒԱԳ ԱՍԼԱՆԵԱՆ

Ծնուել է 1989 թ. յունիսի 5-ին Երեւան քաղաքում:

1995-2003 թթ. սովորել է Երեւան քաղաքի Վ. Բելինսկու անուան թ. 38 միջնակարգ դպրոցում:

2003-2005 թթ. ուսանել է ՀՊՃՀ-ի Քոմփիւթերային համակարգերի դեպարտամենտում:

2005 թ. ընդունուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարան:

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ<br>ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցուած Սուրբ Պատարագի ընթացքում, ձեռամբ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի, քահանայական ձեռնադրութիւն եւ օծում ստացան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 12 միաբան սարկաւագներ: Վրթանէս Սրբազանը Սուրբ Միւռոնով օծեց նրանց ճակատներն ու ձեռքերը՝ շնորհելով հոգեւոր նոր անուններ: Այնուհետեւ ձեռնադրող Սրբազան Հայրը հաւուր պատշաճի քարոզ խօսեց՝ հորդորելով նորընծայ քահանաներին նուիրուածութեամբ եւ նախանձախնդրութեամբ ծառայել իրենց կոչմանը, մայր Եկեղեցուն ու հայրենիքին:

Նոյն օրը՝ երեկոյեան ժամերգութեան ժամանակ, կատարուեց նաեւ նորընծայ քահանաների վեղարի փիլոնութեան արարողութիւն: Տ. Յակոբ, Տ. Անանիա, Տ. Հմայեակ քահանաները վեղար ստացան՝ համալրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանութեան շարքերը:

## Տ. ՀՄԱՅԵԱԿ ԱԲԵՂԱՅ ՍԱՀԱԿԵԱՆ

(աւազանի անունը Աշոտ)

Ծնուել է 1982 թուականի փետրուարի 23–ին Կոտայքի մարզի Մեղրաձոր գիւղում:

1988-1999 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1999-2003 թթ. սովորել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2003 -2005 թթ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:



Քահանայական Ձեռնադրություն

2005 թ. դեկտեմբերի 25– ին՝ Սուրբ Ստեփաննոս Նախավկայի տօնին, ձեռամբ Տ. Եզրաս եպս. Ներսիսեանի, ձեռնադրուել է սարկաւագ:

2005 թ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինութեամբ ծառայութեան է անցել Մայր Աթոռի փնտեսական եւ կադրերի բաժիններում՝ իբրեւ գործավար-քարտուղար:

2006 թ. պաշտպանել է աւարտաճառ «Ասպուածաշնչեան յատուկ անուններն ու տեղանուններն արդի հայերէնի դարձուածաբանութեան մէջ» թեմայով:

2006 թ. որպէս հոգեւոր սպասաւոր ծառայութեան է կոչուել ՀՀ Զինուած ուժերում:

2009 թ. զօրացրուել եւ ծառայութեան է նշանակուել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կադրերի բաժնում՝ որպէս գործավար – քարտուղար:

2009 թ. դեկտեմբերի 13 -ին, ձեռամբ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի, ձեռնադրուել է կուսակրօն քահանայ:

## Տ. ԱՆԱՆԻԱ ԱԲԵՂԱՅ ԾԱՏՈՒՐԵԱՆ

(աւազանի անունը Արամ)

Ծնուել է 1984 թ. յուլիսի 1-ին Աշտարակ քաղաքում:

1992-2001 թթ. սովորել է տեղի Ներսէս Աշտարակեցու անուան թ. 1 միջնակարգ դպրոցում:

2002-2008 թթ. ուսանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տօնին, ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճեանի, ձեռնադրուել է սարկաւագ:

2008 թ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինութեամբ ծառայութեան է անցել Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրի խմբագրութիւնում՝ իբրեւ գործավար-քարտուղար:

2008 թ. նոյեմբերի 20–ին պաշտպանել է աւարտաճառ «Միջին հայերէնի կրօնաեկեղեցական բառապաշարը» թեմայով:

2009 թ. ծառայութիւնը շարունակել է Գէորգեան Հոգեւոր ճեմարանում՝ իբրեւ գործավար–քարտուղար:

2009 թ. դեկտեմբերի 13-ին, ձեռամբ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի, ձեռնադրուել է կուսակրօն քահանայ:

## Տ. ՅԱԿՈԲ ԱԲԵՂԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆ

(աւազանի անունը Արման)

Ծնուել է 1984 թ. դեկտեմբերի 13–ին Գիւմրի քաղաքում:

1991-2000 թթ. սովորել է Գիւմրիի թ. 15 միջնակարգ դպրոցում:

2002-2004 թթ. ուսանել է Գիւմրիի հոգեւոր ընծայարանում:

2004 թ. տեղափոխուել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոց:

2002-2007 թթ. սովորել է Գիւմրիի պետական մանկավարժական համալսարանի հեռակայ բաժնում՝ սպանալով մանկավարժ-աշխարհագրագէտի որակաւորում:

2006 - 2009 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

2007 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տօնին, ձեռնադրուել է սարկաւագ՝ ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճեանի:

2009 թ. յուլիսի 14–ին պաշտպանել է աւարտաճառ «1909–1955 թթ. Ամենայն Հայոց կաթողիկոսական պատմական կոնդակների վաւերագիտական նկարագրութիւն» թեմայով:

2009 թ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր փնօրհնութեամբ ծառայութեան է անցել Մայր Աթոռի Տեղեկատուական բաժնում իբրեւ գործավար-քարտուղար:

2009 թ. դեկտեմբերի 13-ին, ձեռամբ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի, ձեռնադրուել է կուսակրօն քահանայ:

## Տ. ՎԱԶԳԷՆ ՔԱՀԱՆԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(աւազանի անունը Վաղինակ)

Ծնուել է 1978 թուականի սեպտեմբերի 26–ին Եղեգնաձոր քաղաքում:

1985-1995 թթ. սովորել է Եղեգնաձորի Յովհաննէս Յովհաննիսեանի անուան թ. 2 միջնակարգ դպրոցում:

1996 -2002 թթ. ուսանել է Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

2001 թ. դեկտեմբերի 25–ին՝ Սուրբ Ստեփաննոս Նախավկայի տօնին, ձեռամբ Տ. Միքայէլ եպս. Աջապահեանի, ձեռնադրուել է սարկաւագ:

2003 թ. փետրուար ամսին պաշտպանել է աւարտաճառ «Մանազկերտը հայ -արաբական եւ հայ-բիւզանդական հակասութիւնների ոլորտում (Թ–ԺԱ դդ.)» թեմայով:

2002 թ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր փնօրհնութեամբ ծառայութեան է անցել Մայր Աթոռի ՔԴԿ իբրեւ գործավար-քարտուղար:

2003–2005 թթ. ուսանել է Ս. Պետերբուրգի Հոգեւոր ակադեմիայում եւ պաշտպանելով «Հայ Եկեղեցին Ի դարում եւ նրա յարաբերութիւնները Ռուս Ուղղափառ Եկեղեցու հետ» գիտական թեզը՝ ստացել է Աստուածաբանութեան թեկնածուի աստիճան:

2005 թ. ծառայութեան է կոչուել Մայր Աթոռի Միջեկեղեցական յարաբերութիւնների բաժնում, որպէս գործավար–քարտուղար:

2006 թ. նշանակուել է Սեւանի Հոգեւոր դպրանոցում վերակացու:

2009 թ. փետրուարից նոյն պաշտօնով ծառայութիւնը շարունակել է Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

2009 թ. սեպտեմբերին նշանակուել է հոգեւոր ծառայութեան Միւնեաց թեմում:

2009 թ. դեկտեմբերի 13-ին, ձեռամբ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի, ձեռնադրուել է ամուսնացեալ քահանայ:

## Տ. ՆԱԻՐԻ ՔԱՀԱՆԱՅ ԳԷՈՐԳԵԱՆ

(աւազանի անունը Արմէն)

Ծնուել է 1982 թուականի մարտի 24–ին Արմաւիրի մարզի Աղաւնատուն գիւղում:

1988-1999 թթ. սովորել է Աղաւնատուն գիւղի Ղուկաս Աբգարեանի անուան միջնակարգ դպրոցում:

1999 -2003 թթ. սովորել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2003 -2005 թթ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանում:

2005 թ. դեկտեմբերի 25 – ին՝ Սուրբ Ստեփաննոս Նախավկայի տօնին, ձեռամբ Տ. Եզրաս եպս. Ներսիսեանի, ձեռնադրուել է սարկաւագ:

2005 թ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր փնօրհնութեամբ ծառայութեան է անցել Մայր Աթոռի Ճարտարապետական բաժնում իբրեւ գործավար-քարտուղար:

2006 թ. հոգեւոր ծառայութեան է կոչվել ՀՀ Զինուած ուժերում:

2009 թ. սեպտեմբեր ամսին զօրացրուել է եւ նշանակուել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Նախահաշուային բաժնում՝ որպէս գործավար–քարտուղար:

2009 թ. դեկտեմբեր ամսին պաշտպանել է աւարտաճառ «Կ. Պոլսի Հայոց Պատրիարքութեան հաստատումը եւ առաջին պատրիարք Յովակիմ Պրուսացի» թեմայով:

2009 թ. դեկտեմբերի 13-ին, ձեռամբ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի, ձեռնադրուել է ամուսնացեալ քահանայ:

### Տ. ՎԻԳԷՆ ՔԱՀԱՆԱՅ ՂԱԶԱՐԵԱՆ

(աւազանի անունը Արթուր)

Ծնուել է 1978 թուականի նոյեմբերի 5–ին Արթիկ քաղաքում:

1985-1995 թթ. տեղի թ. 2 միջնակարգ դպրոցում:

1996 – 2000 թթ. սովորել է Երեւանի թատերական եւ կինոարուեստի պետական ինստիտուտում ստանալով դրամատիկական թատրոնի եւ կինոյի դերասանի որակավորում:

2003 – 2006 թթ. ուսանել է Գիւմրիի Հոգեւոր ընծայարանում:

2004 -2006 թթ. սովորել է Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

2006 թ. փետրուարի 23–ին, ձեռամբ երջանկայիշատակ Տ. Ներսէս արքեպս. Պօզապալեանի, ձեռնադրուել է սարկաւագ:

2006 թ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր փնօրհնութեամբ ծառայութեան է անցել Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրում որպէս գործավար – քարտուղար:

2006 թ. հոկտեմբերին հոգեւոր ծառայութեան է կոչուել Շիրակի թեմում:

2009 թ. դեկտեմբերի 13-ին, ձեռամբ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի, ձեռնադրուել է ամուսնացեալ քահանայ:

### Տ. ԵՐՈՒԱՆԴ ՔԱՀԱՆԱՅ ԲԱԲԱՅԵԱՆ

(աւազանի անունը Սայաթ)

Ծնուել է 1982 թուականի սեպտեմբերի 12–ին Արարատ քաղաքում:

1990-1997 թթ. սովորել է տեղի թ. 1 միջնակարգ դպրոցում:

1997 – 2000 թ. կրթութիւնը շարունակել է Արարատ քաղաքի Թ-արգմանչաց վարժարանի հումանիտար հոսքում:

2000-2004 թթ. սովորել է Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցում:

2004-2006 թթ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

2006 թ. փետրուարի 23–ին, ձեռամբ երջանկայիշատակ Տ. Ներսէս արքեպս. Պօզապալեանի, ձեռնադրուել է սարկաւագ:

2006 թ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր փնօրհնութեամբ ծառայութեան է անցել Մայր Աթոռի Վարչակազմակերպական գործերում որպէս կառավարչի գործավար – քարտուղար, ապա՝ Մատակարարման բաժնում՝ գնորդ, այնուհետեւ՝ հաշուիչ յանձնախմբում:

2009 թ.փետրուար ամսից ծառայութեան է կոչուել ՀՀ Զինուած ուժերում:

2009 թ. դեկտեմբերի 13-ին, ձեռամբ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի, ձեռնադրուել է ամուսնացեալ քահանայ:

### Տ. ԵՂԻՇԷ ՔԱՀԱՆԱՅ ՆԱԶԱՐԵԱՆ

(աւազանի անունը Արմէն)

Ծնուել է 1980 թուականի նոյեմբերի 4–ին Արթիկ քաղաքում:

1987-1997 թթ. սովորել է տեղի թ. 6 միջնակարգ դպրոցում:

1998 – 2000 թթ. ծառայել է ՀՀ Զինուած ուժերում:

2001 – 2003 թթ. ուսանել է Գիւմրիի Հոգեւոր ընծայարանում:

2004 -2007 թթ. սովորել է Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

2006 թ. հոկտեմբերի 8-ին, ձեռամբ Տ. Փառէն եպս. Աւետիքեանի, ձեռնադրուել է սարկաւագ:

2007 թ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր փնօրհնութեամբ ծառայութեան է անցել Մայր Տաճարի թանգարանում որպէս պատասխանատու սարկաւագ:

2007 թ. դեկտեմբեր ամսից հոգեւոր ծառայութիւնը շարունակել է Շիրակի թեմում որպէս Հառիճի վանքի հոգեւոր հովուի օգնական:

2008 թ. փետրուար ամսին պաշտպանել է աւարտաճառ «Ղուկաս Ա Կարնեցի Կաթողիկոսի կեանքն ու գործունէութիւնը» թեմայով:

2009 թ. դեկտեմբերի 13-ին, ձեռամբ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի, ձեռնադրուել է ամուսնացեալ քահանայ:

## Տ. ԶՕՀՐԱԲ ՔԱՀԱՆԱՅ ՄԱԶՄԱՆԵԱՆ

(աւազանի անունը Էդգար)

Ծնուել է 1983 թուականի յուլիսի 6–ին Աբխազիայի Հանրապետութեան Սուխումի քաղաքում:

1989-2000 թթ. սովորել է Վրաստանի Բաթում քաղաքի Անդրանիկ Զօրավարի անուան միջնակարգ դպրոցում:

2001 -2007 թթ. սովորել է Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

2006թ. հոկտեմբերի 8-ին ձեռամբ Տ. Փառէն եպս. Աւետիքեանի, ձեռնադրուել է սարկաւագ:

2008 թ. յունիս ամսին պաշտպանել է աւարտաճառ «Հայոց Եկեղեցին եւ հայ– ռուսական փոխյարաբերութիւնները ԺԸ դարի Բ կեսին» թեմայով:

2007 թ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր փնօրհնութեամբ ծառայութեան է անցել Մայր Տաճարում որպէս լուսարարի օգնական:

2009 թ. նոյեմբերի 5–ից ծառայութեան է կոչվել ՀՀ Զինուած ուժերում:

2009 թ. դեկտեմբերի 13-ին, ձեռամբ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի, ձեռնադրուել է ամուսնացեալ քահանայ:

## Տ. ԴԱՒԻԹ ՔԱՀԱՆԱՅ ՇԱԽԿԵԱՆ

(աւազանի անունը Սփեօպա)

Ծնուել է 1984 թուականի յունուարի 22–ին Էջմիածին քաղաքում:

1991-2001 թթ. սովորել է Էջմիածնի Ռաֆայէլ Պատկանեանի անուան թ. 9 միջնակարգ դպրոցում:

2001-2005 թթ. սովորել է Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոցում:

2005-2007 թթ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանում:

2006 թ. հոկտեմբերի 8-ին, ձեռամբ Տ. Փառէն եպս. Աւետիքեանի, ձեռնադրուել է սարկաւագ:

2007 թ. մայիս ամսին պաշտպանել է աւարտաճառ «Զաքարեանները հայոց պատմութեան մէջ» թեմայով:

2007 թ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր փնօրհնութեամբ ծառայութեան է անցել Մայր Աթոռի ՔԴ կենտրոնում իբրեւ գործավար-քարտուղար:

2009 թ. նոյեմբերից ծառայութեան է կոչվել ՀՀ Զինուած ուժերում:

2009 թ. դեկտեմբերի 13-ին, ձեռամբ Տ. Վրթանես եպս. Աբրահամեանի, ձեռնադրուել է ամուսնացեալ քահանայ:

## Տ. ԱՇՈՏ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՖԱՐԵԱՆ

(աւազանի անունը Սամուէլ)

Ծնուել է 1984 թուականի յուլիսի 22–ին Էջմիածին քաղաքում:

1991-2001 թթ. սովորել է Էջմիածնի Վահան Ռշտունու անուան միջնակարգ դպրոցում, այնուհետեւ տեղի Ներսիսեան վարժարանում:

2000-2008 թթ. ուսանել է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց վարժարանում եւ Ընծայարանում:

2007 թ. յուլիսի 14–ին ձեռամբ Տ. Նուրհան արքեպս. Մանուկեանի, ձեռնադրուել է սարկաւագ:

2008 թ. յունիսից աշխատանքի է անցել Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանում եւ Սբ Յարութեան տաճարում:

2008 թ. վերադարձել է Հայաստան եւ շարունակել իր հոգեւոր ծառայութիւնը:

2009 թ. դեկտեմբերի 13 -ին, ձեռամբ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի, ձեռնադրուել է ամուսնացեալ քահանայ:

## ՄԻՔԱՅԵԼ ՔԱՀԱՆԱՅ ՆՈՒՐԻՋԱՆԵԱՆ

(աւազանի անունը Արտակ)

Ծնուել է 1985 թուականի դեկտեմբերի 21–ին Արարատի մարզի Մխչեան գիւղում:

1992-2002 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

2002 -2008 թթ. սովորել է Գէորգեան հոգեւոր ճեմարանում:

2006 թ. դեկտեմբերի 25– ին Սուրբ Ստեփաննոս Նախավկայի տօնին ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճեանի ձեռնադրուել է սարկաւագ:

2008 թ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինութեամբ ծառայութեան է անցել Սուրբ Խոր Վիրապ վանքում:

2008 թ. յուլիս ամսին պաշտպանել է աւարտաճառ «Արարատեան Հայրապետական թեմի թեմապատկան գործող եկեղեցիները» թեմայով:

2009 թ. դեկտեմբերի 13-ին, ձեռամբ Տ. Վրթանէս եպս. Աբրահամեանի, ձեռնադրուել է ամուսնացեալ քահանայ: